MINISTRY OF THE INTERIOR OF THE CZECH REPUBLIC

Չեխիայի Հանրապետություն

Հիմնական տեղեկություններ

Միջազգային պաշտպանություն տրամադրելու կարգը

Բարի գալուստ Չեխիայի Հանրապետություն

Սույն աղյուսակում դուք կգտնեք հիմնական տեղեկություններ Չեխիայի Հանրապետության մասին, միջազգային պաշտպանություն տրամադրելու վարույթի վերաբերյալ, ինչպես նաև չեխական հասարակությունում վարքագծի հիմնական կանոնների վերաբերյալ:

Խնդրում եք պահպանել տվյալ կանոնները:



Չեխիայի Հանրապետությունը գտնվում է Եվրոպայի կենտրոնում և ունի մոտավորապես 10,5 միլիոն բնակիչ, որի 4,5 % կազմում են օտարերկրացիները:

ՉՀ բաժանված է 14 մարզերի: ՉՀ մայրաքաղաքն է Պրահան: Պրահայի բնակչությունը կազմում է մոտավորապես 1,2 միլիոն մարդ, բնակչության մնացած մասը բնակվում է այլ քաղաքներում կամ գյուղերում:

Չեխիայի Հանրապետությունում պաշտոնական լեզուն է համարվում չեխերեն լեզուն: Ամենատարածված կրոնը դա քրիստոնեությունն է: Սակայն բազմաթիվ չեխեր ոչ մի կրոն չեն դավանում:

Չեխիայի Հանրապետության քարտեզը

ՉՀ կլիման չափավոր փոփոխական է՝ տարվա չորս եղանակներով: Ձմռանը եղանակը տատանվում է 0 մինչ -5°C, երբեմն ձյուն է, ծայրահեղ դեպքերում եղանակի ջերմաստիճանը կարող է իջնել մինչ -20°C, իսկ ամռանը եղանակի տաքությունը լինում է մոտավորապես 20 մինչ 25°C, բացառիկ դեպքերում անգամ 30°C բարձր:

Միջազգային պաշտպանության դիմելու իրավունք

Օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում Չեխիայի Հանրապետությունը Ձեզ կտրամադրի միջազգային պաշտպանություն:

Միջազգային պաշտպանություն է համարվում կամ ապաստարանը, կամ էլ՝ օժանդակ պաշտպանությունը:

Ապաստարանի մասին օրենքը սահմանում է, որ ապաստարան կտրամադրի այն օտարերկրացուն, ով՝

- Հալածված է իր քաղաքական իրավունքների և ազատության իրականացման համար, կամ
- հիմնավորված է իր վախը հալածանքներից՝ ռասայի, սեռի, կրոնի, ազգային պատկանելիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելիության կամ որոշ քաղաքական հայացքների համար:
- Ապաստարան կարող է տրվել նաև արդեն իսկ ապաստարան ստացած ընտրված անձանց ընտանիքի անդամներին:
- Ապաստարան կարող է տրվել նաև մարդասիրական պատճառներով:

Եթե չեք բավարարում ապաստարան ստանալու պայմանները, սակայն վախ ունեք, որ ձեր երկրում Ձեզ իսկապես լուրջ վնասվածքի վտանգ է սպառնում, ապա կարող է Ձեզ տրվել օժանդակ պաշտպանություն:

Որպես լուրջ վնասվածք նշանակում է մասնավորապես՝ մահապատիժը, խոշտանգումը, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, ինչպես նաև կյանքի լուրջ սպառնալիք՝ երկրում զինված կոնֆլիկտի պատճառով:

Միջազգային պաշտպանություն տրամադրելու ընթացքը

Միջազգային պաշտպանություն տրամադրելու վարույթն սկսում է Չեխիայի Հանրապետության տարածքում միջազգային պաշտպանություն տրամադրելու դիմումը տալու իսկ պահից: Որպես դիմորդներ սկզբում բնակեցվելու եք ընդունման կետում, որտեղից առանց թույլտվության իրավունք չունեք հեռանալ: Կանցկացնեն անձնական և բժշկական ստուգումներ, կվերցնեն ձեր մատնահետքերն ու կլուսանկարեն ձեր դեմքը:

Կստանաք միջազգային պաշտպանություն հայցող դիմորդի փաստաթուղթ, որով դուք կարող եք ապացուցել ձեր ինքնությունը:

Կստանաք նաև ծանուցում, որտեղ կլինեն կարևոր տեղեկությունները: Ուշադիր կարդացեք տեղեկությունները:

Դուք իրավունք ունեք շփվելու ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ (UNHCR).

Իրավունք ունեք ինքնուրույն ապահովել իրավաբանական խորհրդակցություն:

Պաշտպանության դիմորդներին անվճար իրավաբանական խորհրդակցություն կարող են տրամադրել նաև հասարակական կազմակերպությունները:

Ձեր դիմումի վարույթի ընթացքում կարող եք տեղափոխվել բնակեցման կետերից, որտեղից կարող եք հեռանալ: Հնարավորություն ունեք նաև ինքնուրույն, Ձեր սեփական ծախսերով տեղափոխվել և բնակվել մեկ այլ բնակավայրում:

Բնակեցման կետերոնում Ձեր տրամադրության տակ են սոցիալ բաժնի աշխատողները, որոնք Ձեզ ամեն ինչում կօգնեն և կտան զանազան խորհուրդներ:

Վարույթի ընթացքում Ձեր հետ կանցկացվի մեկ կամ մի քանի հարցազրույցներ՝ Ձեր դիմումի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություն հայտնելու նպատակով:

Վարույթի ընթացքում Ձեր հետ շփվելու են թարգմանչի ներկայությամբ և այն լեզվով, որին տիրապետում եք:

Վարույթը շատ դեպքերում ավարտվում է դիմումը տալուց մինչ 6 ամիսը: Սակայն ժամկետը կարող է նաև երկարաձգվել, հատկապես գործի բարդության պատճառով կամ Ձեր՝ իշխանությունների հետ չհամագործակցելու պատճառով:

Խնդրում ենք լինել համբերատար և ակտիվ համագործակցել Ներքին գործերի նախարարության աշխատողների հետ:

Միջազգային պաշտպանության տրամադրումը

Ներքին գործերի նախարարությունը անձամբ Ձեզ կհանձնի միջազգային պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ դիմումի որոշումը: Որոշումը հանձնելուն ներկա է լինելու նաև թարգմանիչը:

Կարող է Ձեզ տրվի միջազգային պաշտպանություն կամ օժանդակ պաշտպանություն:

Ապաստարանը տրվում է անսահման ժամկետով:

Օժանդակ պաշտպանությունը՝ դա ժամանակավոր է, ամենաքիչը սակայն մեկ տարով: Ժամկետը լրանալուց հետո կարելի է դիմել՝ այն երկարացնելու համար:

Որպես միջազգային պաշտպանություն ստացած անձ կստանաք նաև բնակեցման իրավունքի փաստաթուղթ, որն անհրաժեշտ է պահել այնպես, որ չկորի, չվնասվի կամ չչարաշահվի:

Կստանաք նաև ծանուցում, որտեղ կլինեն մի շարք կարևոր տեղեկություններ: Ուշադիր կարդացեք բոլոր տեղեկությունները:

Միջազգային պաշտպանության մերժումը

Միջազգային պաշտպանություն չստանալու դեպքում պարտավոր եք լինելու հեռանալ Չեխիայի Հանրապետությունից:

Ներքին գործերի նախարարության որոշումը կարող եք բողոքարկել համապատասխան դատարանում: Այդ մասին կտեղեկացվեք որոշումն ստանալիս:

ՉՀ միջազգային պաշտպանություն չեք ստանա այն դեպքում, երբ՝

- Ձեր ծագման երկիրը, որտեղից գալիս եք, անվտանգ է, կամ էլ գալիս եք այլ ապահով երկրից:
- Ապաստարանի անցյալում դիմել եք Եվրոխորհրդի մեկ այլ երկրում: Ցվյալ դեպքում Ձեզ կտեղափոխեն տվյալ երկիր: Այդ երկիրն էլ որոշում կկայացնի պաշտպանություն տրամադրելու դիմումի վերաբերյալ:
- Ձեր երկիրը լքել եք տնտեսական պատճառներով, քանի որ, օրինակ՝ վատ վարձատրվող աշխատանք եք ունեցել կամ եղել եք գործազուրկ:

Կարևոր տեղեկություններ՝

- **ՉՀ ոստիկանությունը** կընդունի Ձեր՝ միջազգային պաշտանություն տրամադրելու դիմումը:
- **Չեխիայի Հանրապետության Ներքին գործերի նախարարությունը (ՉՀ ՆԳՆ)** գրանցում է Ձեր դիմումը, վարում է միջազգային պաշտանություն տրամադրելու դիմումի վարույթը, այդ թվում անց է կացնում հարցազրույցներ և որոշում է կայացնում Ձեր դիմումի վերաբերյալ:
- **Փախստականների կենտրոնների վարչությունը (SUZ՝ ՓԿԿ)** ղեկավարում է ընդունման, բնակեցման և ապաստանային կենտրոնները և տրամադրում է սոցիալական ծառայություններ:
- Հարցազրույցի ժամանակ հայտնեք բոլոր կարևոր տեղեկությունները՝ ինչու եք լքել Ձեր երկիրը, ինչպես և ում կողմից եք հալածվել:
- Ազնվորեն պատասխանեք բոլոր հարցերին:
- Ներկայացրեք բոլոր անձնական փաստաթղթերն ու այլ փաստաթղթերը, որոնք կծառայեն որպես Ձեր պնդումների ապացույց:
- Անհանգստանալու հարկ չկա, բոլոր Ձեր կողմից հայտնած տեղեկությունները գաղտնի են:
- Միջազգային պաշտպանություն ստանալու դիմումի վերաբերյալ ամբողջ վարույթի ընթացքում իրավունք չունեք լքել ՉՀ:
- Ներքին գործերի նախարարության աշխատակիցները պիտի կարողանան Ձեր հետ կապ հաստատել Ձեր կողմից հայտնած հասցեներում: Որևիցե փոփոխություն անմիջապես հայտնեք: Նման տեղեկությունը մոռանալով հայտնել կհանգեցնի նրան, որ Ձեր՝ միջազգային պաշտպանություն տալու գործը կկասեցվի:
- Բոլոր նշանակված հանդիպումներին ներկայացեք ժամանակին, այնտեղ Ձեզ են սպասում Ներքին գործերի նախարարության աշխատակիցն ու թարգմանիչը:
- Բոլոր աշխատակիցներին վերաբերվեք հարգանքով և քաղաքավարի, նրանք այստեղ են գտնվում նրա համար, որպեսզի Ձեզ օգնեն:

- ՉՀ ապաստարանի մասին վարույթը ղեկավարվում է ապաստարանի մասին օրենքով (օրենք համար 325/1999):

Լրացուցիչ տեղեկություններ՝

www.mvcr.cz
www.imigracniportal.cz
www.unhcr.cz

Հրապարակել է Չեխիայի Հանրապետության Ներքին գործերի նախարարությունը, ապաստանային և միգրացիոն վարչությունը 2017 թվականին:

Նկարագրություն՝ Adéla Rúčková Moravcová

Կարևոր հեռախոսահամարներ՝ զանգահարելը անվճար է:

112 Եվրոպական արտակարգ իրավիճակների հեռախոսահամար

150 Հրշեջներ

155 Բժիշկ

156 Քաղաքային ոստիկանություն

158 ՉՀ ոստիկանություն

116 111 Անվտանգության գիծ երեխաների համար

251 51 13 13 Անվտանգության գիծ կարիքավոր կանանց համար

Կյանքը

Չեխիայի Հանրապետությունում

Ազատությունը արտահայտվում է հիմնական իրավունքով

Չեխիայի Հանրապետությունում բոլորն իրավունք ունեն ազատ արտահայտել իրենց կարծիքը:

Սակայն ազատությունն ունի իր սահմանները, չի խախտում ուրիշների ազատությունն ու արժանապատվությունը: Բոլոր մարդկանց նկատմամբ վերաբերվեք հարգանքով:

Չեխիայի Հանրապետությունը դեմոկրատական երկիր է:

Բոլորն ունեն նույն իրավունքները:

ՉՀ քաղաքացիները կարող են ազատ ընտրություններում որոշում կայացնել, թե ովքեր կկառավարեն իրենց երկիրը:

Չեխիայի Հանրապետությունը օրենքի երկիր է:

Հասարակական հարաբերությունները կարգավորվում են օրենքով: Հարկավոր է օրենքը պահպանել, հակառակ դեպքում կարող էք պատժվել:

Օրենքի չիմացությունը չի արդարացնում:

Օրենքն ավելի է առաջնահերթ է քան կրոնը:

Իշխանությունները որոշում են կայացնում իրավական նորմերի հիման վրա և երբեք որոշում չեն կայացնում կրոնական կանոնների հիման վրա:

Յուրաքանչյուր ոք օրենքի առաջ հավասար է:

Կրոնը անձնական հարց է:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ընտրել իր կրոնն ու լինել առանց կրոնի:

Հարգեք ուրիշների անձնական որոշումները:

Կանայք և տղամարդիկ հավասար են:

Կանայք իրենց կյանքի վերաբերյալ նույնպես ազատ որոշում են կայացնում, ինչպես՝ տղամարդիկ:

Կանայք կարող են աշխատել բոլոր ոլորտներում, ինչպես նաև տղամարդիկ, և նպաստել ընտանեկան եկամուտներին, ինչպես նաև տղամարդիկ:

Կանայք ազատ իրավունք ունեն ընտրել իրենց ամուսին:

Կանայք կարող են ապրել իրենց տղամարդկանց հետ, անգամ եթե ամուսնացած չեն: Միևնույն ժամանակ սովորական է, երբ հասարակությունում մտերիմ մարդիկ շփվում են, գրկախառնվում են և համբուրվում են:

Ամուսնություն կարող են կնքել միայն 18 տարեկանից բարձր անձիք:

Օրենքն արգելում է, որ մի տղամարդ մեկ կնոջից ավել կին ունենա:



Չեխիայի Հանրապետությունում նույն սեռի ներկայացուցիչները կարող են միասին ապրել և կնքել միասեռ ամուսնություն:

Կինը կարող է ապրել կնոջ հետ, իսկ տղամարդը՝ տղամարդու: Միասին կարող են դաստիարակել երեխաներ:

Արգելված են ընտանեկան բռնությունն ու սեռական ոտնձգությունը:

Օրենքն արգելում է բռնությունը կանանց և երեխաների նկատմամբ, ինչպես նաև տղամարդկանց միջև: Բռնության զոհերին աջակցում են համապատասխան մարմինները:

Սեռական կապը կնոջ կամ տղամարդու հետ իր կամքի հակառակ համարվում է քրեական հանցագործություն:

Չեխիայի Հանրապետությունում բոլոր երեխաների համար պարտադիր է դպրոց հաճախելը, որը տևում է ինը տարի:

Հարկադիր ուսուցման խախտումը համարվում է օրենքի խախտում:

Տղաներն ու աղջիկները հաճախում են նույն դպրոցը և միասին սովորում են բոլոր առարկաները, այդ թվում նաև ֆիզկուլտուրան:

Որքան բարձր է ձեր կրթությունը, այնքան մեծ հնարավորություն ունեք ապագայում գտնել լավ աշխատանք:

Ծնողները պատասխանատու են իրենց երեխաների վարքի համար:

Երեխաների վարքի համար պատասխանատու են երկու ծնողներն էլ հավասարապես:

15 տարեկանից երեխան կարող է քրեական հետապնդվել:

Անհրաժեշտ է հարգել մասնավոր սեփականությունը:

Օրինակ՝ մի մտեք ուրիշի այգի, ուրիշի դաշտում մի քաղեք մրգերն ու բանջարեղենները, առանց թույլտվության մի որսացեք կենդանիներ կամ ձկներ:

Անհրաժեշտ է պահպանել ճանապարհային երթևեկության կանոնները:

Տվյալ կանոնները չպահպանելու դեպքում ձեզ հասնում է տուգանք, ինչպես նաև մեքենան վարելու արգելք:

Մեքենա կարող է վարել 18 տարեկանից բարձր անձը: ՉՀ ալկոհոլի և թմրամիջոցների նկատմամբ զրոյական հանդուրժողականություն է: Եթե դուք ալկոհոլ եք խմել կամ օգտագործել եք թմրանյութ, ապա մի վարեք մեքենա:

Ճանապարհային երթևեկության կանոնները կիրառվում են նաև հետիոտների և հեծանվորդների նկատմամբ:

Պայմանավորված ժամկետները պահպանելը շատ կարևոր է:

Դպրոց, աշխատանքի վայր կամ պայմանավորված հանդիպումներին ներկայացեք պայմանավորված ժամին: Պայմանավորված ժամը չպահպանելու դեպքում կամ ուշ ներկայանալու դեպքում հարկավոր է նախօրոք ներողություն խնդրել:

Բժշկական օգնությունը ապահովվում է բժշկական ապահովագրման հիման վրա:

ՉՀ յուրաքանչյուր բնակիչ պարտավոր է վճարել հանրային առողջության ապահովագրման համար: Միշտ տեղեկացեք՝ արդյոք վճարված է ձեր առողջության ապահովագրությունը, հակառակ դեպքում ձեզ սպառնում է պարտքի վտանգ:

Բժիշկների սահմանափակ ընտրություն կա: Կանանց կարող են բուժել նաև տղամարդ բժիշկներ, ինչպես նաև՝ տղամարդկանց կարող են բուժել կանայք բժիշկներ:

Սենյակ մտնելիս նորմալ է բարևել, իսկ հեռանալիս՝ հրաժեշտ տալ:

Ողջունումն ու ներկայանալը կարող է ուղեկցվել աջ ձեռքի կարճ և ամուր սեղմումով: Ըստ կանոնների՝ առաջինը իր ձեռքն է մեկնում գերագույնը ստորադասին, կինը՝ տղամարդուն, մեծը՝ փոքրին:



Չեխիայի Հանրապետությունում սովորաբար զրուցելիս մարդիկ միմյանց միջև պահպանում են ավելի մեծ հեռավորություն:

Հնարավորության դեպքում պահպանեք տվյալ հեռավորությունը նաև հասարակական տրանսպորտում և մի նստեք միմյանց շատ մոտիկ:

Զրուցելիս սովորաբար նորմալ չի, երբ դիպչում եք միմյանց, հատկապես երբ զրուցում են կինն ու տղամարդը:

Շատ մոտ կոնտակտը հնարավոր է միայն մտերիմ լինելու դեպքում:

Քաղաքավարությունն ու հարգանքը միմյանց նկատմամբ շատ կարևոր են:

Հարգեք ձեր շրջապատը: Օրինակ՝ շատ բարձրաձայն մի լսեք երաժշտություն կամ տանը մի կազմակերպեք աղմկոտ խնջույքներ: Երեկոյան ժամը 22:00 մինչ առավոտյան ժամը 6:00 պահպանվում է գիշերային հանգիստ:

Հասարակական տրանսպորտային միջոցներից օգտվելիս նախ հնարավորություն տվեք, որպեսզի մարդիկ բարձրանան տրանսպորտ, հետո արդեն բարձրացեք դուք:

Նորմալ է, երբ օգնում են ծեր մարդկանց և հաշմանդամներին:

Տրանսպորտում հարկավոր է նստելու տեղը զիջել ծեր մարդկանց, հաշմանդամներին և հղի կանանց:

Եթե դուք փողոցում տեսնեք ինչ-որ մեկին, որը բուժօգնության կարիք ունի, ապա տվյալ անձին ցուցաբերեք առաջին օգնություն, այնուհետև զանգահարեք շտապ օգնություն՝ 155 հեռախոսահամարով: Տվյալ անձի բուժումը վճարվելու է տվյալ անձի բժշկական ապահովագրությունից:

Պահպանեք քաղաքավարիության կանոնները:

Ուտելու ժամանակ շատ տգեղ է, երբ բարձր գղտում եք, ուտելիս չպպացնում եք կամ այլ ձայներ էք հանում:

Շատ անվայել է փողոցում մրգելն ու թքելը:

Ալկոհոլ օգտագործելը թույլատրվում է 18 տարեկանից:

Ռեստորաններում, մեկ այլ փակ տարածություններում, որտեղ կան մեծ քանակով մարդիկ, օրինակ՝ ավտոբուսների և տրամվայների կանգառներում կամ այլ հասարակական վայրերում արգելված է ծխել:

Տներում, ինչպես նաև փողոցում արգելված է աղբ նետել:

Աղբը նետեք աղբարկղեր կամ աղբի կոնտեյներներ: Աղբը տեսակավորվում է ըստ տեսակի՝ պլաստմաս, թուղթ, ապակի, խառը աղբ: Խոշոր աղբերի համար նախատեսված են հատուկ կոնտեյներներ:

Ձեր հետ միշտ ունեցեք ձեր փաստաթղթերը:

Հատկապես միշտ ունեցեք միջազգային ապաստանի դիմորդի փաստաղթղթը կամ փախստականի կացության իրավունքի փաստաթուղթը, կամ օժանդակ պաշտպանության փաստաթուղթը: Ինչպես նաև կրեք ձեր հետ ձեր բժշկական ապահովագրության փաստաթուղթը:

Մեքենա վարելիս միշտ ձեր մոտ պահեք ձեր վարորդական իրավունքը:

ՉՀ ոստիկանությունն ու քաղաքային ոստիկանությունը ապահովում են բոլոր բնակիչների անվտանգությունը:

Ոստիկանությանը հարկավոր է հարգել:

Վտանգի դեպքում զանգահարեք ոստիկանությունն՝ 158 հեռախոսահամարով: